**Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (Acted) Հայաստանյան մ/Ճ առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն**

Ք․ Երևան 28․11․2025թ․

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին**

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Acted-ը միջազգային հասարակական կազմակերպություն է, որը գործում է ավելի քան 40 երկրներում՝ նպատակ ունենալով ապահովել արտակարգ իրավիճակներում արագ արձագանք և առաջարկել ու իրականացնել երկարաժամկետ զարգացման լուծումներ։ Հայաստանում մենք գործում ենք հինգ տարի՝ իրականացնելով ծրագրեր սոցիալական պաշտպանության, տնտեսական զարգացման, կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման ոլորտներում։ Մեր առաքելությունն է խթանել դիմադրողականություն, նվազեցնել աղքատությունը և ապահովել ներառական ու կայուն զարգացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարգինալացված համայնքների բնակիչների կյանքի բարելավմանը։ Հայաստանում արդեն շուրջ 5 տարի մեր կազմակերպությունը իրականացնում է ծրագրեր աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտում՝ հասցեագրելով խոցելի խմբերի առջև ծառացած խնդիրները։ Ստորև ներկայացնում եմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը կից հասարակական խորհրդին անդամակցելու համար անհրաժեշտ տվյալները․

- **Կազմակերպության անվանումը** - Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (Acted) Հայաստանյան մ/Ճ առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն (ՀՎՀՀ – 02834561)
- **Գործունեության հասցե** - ՀՀ, ք․ Երևան, Տպագրիչներ 3, բն․ 3։
- **Գործունեության համայնք/մարզ** – ՀՀ բոլոր մարզեր
- **Գործունեության ոլորտ, այլ տեղեկություններ** – սոցիալական պաշտպանություն, տնտեսական զարգացում, կլիմայի փոփոխություն և շրջակա միջավայրի պաշտպանություն, աղետների ռիսկերի կառավարման ոլորտներում, արտակարգ իրավիճակներում արձագանք։

Կանխավ շնորհակալ եմ անդամակցության հաստատման համար։

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Պասկալ Նոել Բեռնար
Կատարող՝ փոխնախագահ Մարիա Հարությունյան
Հեռ․՝ (+374 33) 007 130; Էլ․ հասցե՝ maria.harutyunyan@acted.org